# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԼԵՎ-ԱՐ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/375 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 1 | Նստարան՝ Մետաղական հիմնակմախքով և փայտյա նստատեղերով: Նստարանը պետք է պատրաստված լինի առնվազն 2000x900մմ չափերի:Մետաղական հիմնակմախքը պատրաստված լինի քառակուսի կտրվածքով խողովակից /40x40x3մմ/ նստարանի 2 կողամասերում՝ եռակցումով /եռակցվող մասերը հղկել հղկաքարով/: Մետաղական կողամասերի բարձրություն՝ առնվազն 630մմ:Մետաղյա կողամասերի ոտքերի ստորին մասում եռակցված առնվազն 3մմ հաստությամբ առնվազն 70x70մմ չափսերի 4 մետաղական թիթեղներ՝ յուրաքանչյուրի վրա 4 անցքեր, հարթակին /հատակին/ ամրացնելու համար: Նստարանի անմիջապես նստատեղի տակ /փայտյա մասերի տակ, առջևում և ետնամասում/ 2 մետաղական կողամասերին եռակցված 2 հատ առնվազն 30x30x2 մմ չափսերի քառակուսի կտրվածքով խողովակ: Մետաղական 2 կողամասերին՝ նստատեղի փայտերի ամրացման համար եռակցված պողպատյա անկյունակներ՝ առնվազն 40x40x4մմ չափերի առնվազն 460մմ երկարության, իսկ հենակի փայտերի ամրացման համար՝ պողպատե անկյունակներ առնվազն 40x40x4մմ չափերի առնվազն 300մմ երկարության:Նստարանի մեջտեղում՝ նստատեղի փայտյա մասերի տակ և հենակի փայտյա մասերի տակ, տեղադրված առնվազն 30x20x2մմ հաստությամբ ուղղանկյուն կտրվածքով մետաղական խողովակ՝ եռակցված հիմնակմախքին, իսկ փայտյա մասերին՝ հեղյուս և մանեկով /բոլտ ու գայկա/ ամրացված: Նստարանի հենակին /4հատ/ և նստատեղին /6հատ/ 2 մետաղական կողամասերին հեղյուսով և մանեկով ամրացված առնվազն 1900x60x40մմ չափսերի չորացրած հաճարի հղկված փայտյա մասեր՝ նստատեղի մասերում եզրերը կլորացված: Մետաղական մասերը՝ երկշերտ ներկված /գույնը ընտրել պատվիրատուի պատվերով/: Փայտյա մասերը |

| | |
|---|---|
| | լաքապատված հաճարի գույնը մգեցնող լաքով:Թիկնակի վերին փայտյա մասի վրա, լազերային փորգրությամբ, փորագրված լինի §Մալաթիա-Սեբաստիա¦: Նստարանների տեղադրումը իրականացնել պատվիրատուի ներկայացված հասցեներով, մատակարարի միջոցներով: Նստարանի մետաղական հիմնակմախքի պատրաստումը /կորոցումները/ իրականացնել պատվիրատուի կողմից ներկայացված լուսանկարին համապատասխան: * Նստարանների պատրաստումը իրակականացնել շինարարական նորմերին, կանոններին և տեխնիկական պայմաններին համապատասխան: *Բոլոր ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО «Лев-Ар» в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/375 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 1 | |